



Գ. ԶԱՏԿԻ ԳԱՌՆ ԵՒ ՃԱՇ

Քրիստոնէական տօներուն մէջ ամենէն նշանաւորն ու խորհրդաւորը, Զատիկը, մեր հարց սեղանին վրայ կը բերէր հոգեւորին հետ մարմնաւոր յատուկ ուրախութիւն մ'ալ, որ իւր առատութեան հետ լի էր նաեւ խորհրդով:

1. — Ճաշը: — Ը դարու հեղինակ մը, Գր. Արշարունին, կու տայ մեզ այս օրուան ճաշին բաւական մանր նկարագիր մը, զատկական «նաւակատեաց» նմանեցնելով կամսարական վահանայ խօսքերն եւ իւր գրաւոր վաստակը: Զմեզ քո սեղանիդ վրայ կերակրեցիր, կ'ըսէ անոր, «ջամբելով նաշին՝ մտով օրհնութեան եւ աւոյշ գիւնով, եւ բանից ոչրախօսքեան հոգւոյ եւ մարմնոյ»: Եւ անոր խնդրով կատարած իւր Մեկնութիւնը կը համեմատէ փոխադարձ սեղանի մը՝ նոյնպէս յատուկ սոյն «աստուածային պասեքիս», զոր կը յօրինեն «հաւնք, որքք, խոյք, գառն ոյխարաւ հանդերձ, եւ դարձեալ բազում